ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5318-Ա « 30 » հոկտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.50/56 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՆԱՐԻԿ ԶՈՀՐԱԲԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել ՀՀ վարչական դատարանի հ.ՎԴ7469/05/22 վարչական գործով կայացված վճիռը, համաձայն որի պարտավորեցվել է Երևանի քաղաքապետին տրամադրել Երևան քաղաքի Քըրք Քըրքորյան փողոց հ.50/56 հասցեում գույքային միավորների՝ բնակելի տան և դրա սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասի նկատմամբ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի շրջանակներում Քնարիկ Զոհրաբի Հովհաննիսյանի (ծնված 17.08.1984թ.) սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշումը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել ք.Երևան, Աջափնյակ, Քըրք Քըրքորյան փողոց հ.50/56 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Քնարիկ Զոհրաբի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 261.29քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 261.29քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Երևան, Աջափնյակ, Լենինգրադյան փողոց հ.50/2 բնակելի տանը տրամադրել «Քըրք Քըրքորյան փողոց հ.50/56» հասցեն:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ 